ԲԱՑԱՀԱՅՏԻՉ-ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Է.Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

Գրաբարի գոյականական անդամի լրացական կապակցություններից որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունները դարձել են ատենախոսությունների, հոդվածների, մենագրությունների նյութ և առանձին քննության ենթարկվել բառակապակցությունների ուսմունքում, մինչդեռ բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունը այդպիսի հետազոտման չի ենթարկվել, քանզի այն չի մտնում արդի ըմբռնումով ներկայացվող բառակապակցության մեջ[1]:

Գրաբարի քերականները, անշուշտ, բնութագրել են բացահայտիչը, բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը, սակայն նրանց՝ բացահայտչի վերաբերյալ շատ ըմբռնումներ այսօր ընդունելի չեն. նրանք բացահայտիչ են համարել միմյանց մոտ դրվող գոյականները, ներառյալ գոյական որոշիչները, որոնք կարող են լինել և՛ նախադաս, և՛ հետադաս: Այդ հարցի պարզաբանմանը հատկապես անդրադարձել է Հ.Ավետիսյանը[2]: Քանի որ նա բնութագրում է որոշիչը, իսկ քերականները գոյական որոշիչները բացահայտիչ են համարում[3], ուստի հանգամանորեն ներկայացնում է նրանց կողմից բացահայտչին և բացահայտյալին վերաբերող փաստերն ու մեկնաբանությունները, ապա նշում այն տարբերակիչ հատկանիշներն ու միջոցները, որոնցով կարելի է զանազանել գրաբարի գոյական որոշիչը բացահայտչից[4]: Ընդունելի համարելով նրա բացատրություններն ու առաջարկները՝ ստորև անդրադառնում ենք դրանց՝ կատարելով որոշ հավելումներ:

Ինչո՞ւ գրաբարի քերականները չկարողացան տարբերակել գոյականական որոշիչները և բացահայտիչները: Ըստ Հ.Ավետիսյանի՝ 2 հանգամանքով.

1. *Շարադասական*: Նախադաս բացահայտչի ընդունումը, որի ազդեցությամբ բացահայտիչ են համարվում նույն կամ նույնատեսակ գոյականները հետադաս գործածվելիս[5]:

2. *Արտաբերական*: Բացահայտչի տրոհվող արտաբերության անտեսումը[6]: «Տրոհվող արտաբերությունը հայերենի բացահայտչի ձևավորման, ուստի և այն գոյական որոշչից տարբերելու ամենաէական հատկանիշներից մեկն է» (ընգծումները մերն են–Է.Մ.)[7]: Օրինակ՝ յԱյրարատ *գաւառ. գետն* Երասխ կապակցություններում տրոհվող արտաբերություն չկա, և բացահայտիչ պատկերացնելն ավելորդ է, իսկ «Զրուան հայր մեր խորհեցաւ» (Եզն., 92) նախադասության մեջ *Զրուան հայր մեր* կապակցության *Զրուան* և *հայր մեր* բաղադրիչների միջև տրոհվող արտաբերություն կա, որն էլ հենց բացահայտիչը որոշչից տարբերելու միջոց է. *հայր* բացահայտիչ է (*մեր* հատկացուցիչ

---

[1] Վ.Քոսյանը նկատում է, որ «բացահայտիչը, որն իր լրացյալից միշտ տրոհված է հանդես գալիս, նախադասության անդամ է, սակայն այն բառակապակցություն չի կազմում» (տե՛ս Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975, էջ 31):

[2] Տե՛ս Հ.Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Ե.,1972, էջ 89-106:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 91-96:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 96-100:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 90-96:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 96:

[7] Նույն տեղում, էջ 97:

է), *Զրուան*՝ բացահայտյալ: Այդպես էլ՝ «Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր» (Ծն., Ժ, 15) նախադասության մեջ *զՍիդոն և զանդրանիկ իւր* բաղադրիչների միջև տրոհվող արտաբերություն կա. *զանդրանիկ* բացահայտիչ է (*իւր* հատկացուցիչ է), *զՍիդոն* բացահայտյալ:

Հ.Ավետիսյանը պաշտպանում է գրաբարի այն քերականներին, ովքեր գտնում են, որ բացահայտիչը չի կարող լինել նախադաս, որովհետև «իբրև բացահայտիչ է ըմբռնվում հետադաս գոյականը՝ անկախ նախադաս գոյականի (իմա՛ բացահայտյալի–Է.Մ.) բովանդակությունից, որը կարող է լինել թե՛ եզակի, թե՛ ընդհանուր, թե՛ անհայտ, թե՛ շատ կողմերով հայտնի: *Ինչպիսի առարկա էլ լինի, այն միշտ կարող է բացահայտվել մի նոր հատկանիշով*» (ընդգծումը մերն է–Է.Մ.)[8].

Բացահայտչի տեսակները և շարադասությունը: Բացահայտիչ-բացահայտյալի շարադասությունը կարելի է քննել, եթե պարզ են բացահայտչի տեսակները, որովհետև տարբեր տեսակի բացահայտիչներն ունեն տարբեր շարադասություն: Ուրեմն տվյալ դեպքում շարադասությունը կապվում է տեսակների հետ: Քանն այդպես է և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում:

Բացահայտչի տեսակների որոշման հարցը քերականագիտական, տեսական հարց է, որը բխում է լեզվի տվյալ շրջանի գրավոր աղբյուրների փաստերից, նախադասություններից: Արդի հայերենի բացահայտչի տեսակները որոշվել են նոր շրջանի, իսկ գրաբարինը՝ հին շրջանի գրավոր խոսքի հիման վրա: Խոսքի և նախադասության կառուցվածքային տարբերություններ, անշուշտ, կան, սակայն կան նաև ծանրակշիռ ընդհանրություններ, որոնց հիման վրա կարելի է արդի հայերենի բացահայտչին վերաբերող քերականական գիտելիքները կիրառել նաև գրաբարի բացահայտչի վերաբերյալ: Ուստի, առաջնորդվելով այդ սկզբունքով, միաժամանակ նշում ենք, որ բացահայտչի դրսևորումների վերաբերյալ գրաբարի քերականների տեսական մոտեցումներն ու մեկնաբանությունները չեն բավարարում նյութը ամբողջությամբ ընդգրկելու, հետևապես վերջիններս կօգտագործվեն որպես օժանդակ միջոց: Մենք համաձայն ենք գրաբարի բացահայտչի երեք տեսակի ընդունմանը՝ *սովորական* կամ *բուն*, *մասնական*, *մասնավորող պարագայական*[9]:

Ա) *Սովորական կամ բուն բացահայտիչ*: Սովորական կամ բուն բացահայտիչը գրաբարում բացահայտիչներից ամենատարածվածն է, միայն հետադաս գործածություն ունի և բազմազան կառույցներում է հանդես գալիս: Քանի որ գրաբարում բացահայտիչը բացահայտյալից կանոնարկված կետադրությամբ չի տրոհվում, ուստի բացահայտիչների և բացահայտյալների որոշման հիմքում ընկած է ենթադրյալ տրոհվող արտաբերությունը, որի անտեսումով հնարավոր է որոշչի և բացահայտչի աննշան շփոթ էլ լինի[10]: Ուստի անհրաժեշտ ենք համարում բացահայտիչ-բացահայտյալի ընդհանուր կա-

---

[8] Նույն տեղում, էջ 97:

[9] Տարբեր քերականներ ընդունում են հայոց լեզվի բացահայտչի տարբեր տեսակներ. օրինակ՝ *սովորական, մասնական* (տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Ե., 1961, էջ 427), *բուն, մասնական, մասնավորող պարագայական* (տե՛ս Ս.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 290), սովորական, *մասնական, պարագայական մասնավորող, տեղեկանքային* (տե՛ս Ռ.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 165):

[10] Օրինակ՝ *Աբրահամ հայր մեր* կապակցությունը, որ կարող է ընմբռնվել երկու ձևով՝ 1. *Աբրահամը՝ մեր հայրը* (բացահայտիչ-բացահայտյալ) և 2. *Մեր հայր Աբրահամը* կամ *Մեր Աբրահամ հայրը* (որոշիչ-որոշյալ):

սակցություններից առանձնացնել և որոշ խմբավորման ենթարկել սովորական կամ բուն բացահայտչի կառույցները[11]: Դրանով կորոշվեն նաև սովորական կամ բուն բացահայտչի և մյուս տեսակների սահմանները:

1. Որևէ տոհմի, ազգի, ցեղի ծագումնաբանությունը ներկայացնելիս հարկ է լինում սկզբնապատճառից՝ նախահորից, նախամորից, մեկ ուրիշից անցնել մյուսներին, և այսպես յուրաքանչյուր հաջորդի անունը նախորդի անվան բացահայտիչն է: Այդ թվարկումները արտաբերվում են ինչ-որ դադարով, տրոհումով, որպիսի օրինակներ շատ են հանդիպում Աստվածաշնչում և Խորենացու երկում[12]: Ինչպես՝ Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խոսրով *զՍահակ որդի* Մեծին Ներսիսի, *որդւոյ* Աբանազենի, *որդւոյ* Յուսկան, *որդւոյ* Վրթանիսի, *որդւոյ* սրբոյն Գրիգորի [ՀՀ, 7(3), 241]: Եւ յետ բանիցս այսոցիկ ի թագաւորութեանն Արտաշիսի արքայի Պարսից և Եզրայ *որդի* Սարուայ, *որդւոյ* Ազարեայ, *որդւոյ* Քեղկեայ, *որդւոյ* Սեղումայ, *որդւոյ* Սադովկայ, *որդւոյ* Աքիտովքայ, *որդւոյ* Ամարեայ, *որդւոյ* Ազարեայ, *որդւոյ* Մարովքսայ, *որդւոյ* Զարեայ, *որդւոյ* Ռզեայ, *որդւոյ* Բովկայ, *որդւոյ* Արիսուայ, *որդւոյ* Փենեէսի, *որդւոյ* Եղիազարու, *որդւոյ* Ահարոնի (Եզր., Է, 1_5)*:

2. Եթե հաջորդական թվարկումը սահմանափակվում է առաջին և երկրորդ աստիճանների նշումով, իսկ լրացում-լրացյալ հանդիսացող այդ աստիճանները իրենց հերթին ունեն լրացումներ, ապա դրանք էլ սովորական կամ բուն բացահայտչով կապակցություններ են: Օրինակ՝ Վասն *կնոջ իւրոյ Աշխենայ* տիկնոջ (Ագթ., ՁԵ, 397)*: Առաքէ *զՄմբատ* ասպետ, *զհայր* Բագրատայ (ՄԽ, II, ԶԳ, 255)*: Սկիզբն արարեալ յամացն *Արշակայ* արքայի *որդւոյն* Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ *Արտաշիսի* արքայի Հայոց, *որդւոյն* Վռամշապհոյ (Ե., 12): Եվ կին մի <...> ողողակէր առ Եղիսէ և ասէր, *ծառայ* քոյ, *այր* իմ մեռաւ (Դ Թագ., Դ, 1)*:

3. Եթե իրար հաջորդող գոյականներից մեկն ունի լրացում (ավելի շուտ՝ հատկացուցիչ), երկրորդը սովորական կամ բուն բացահայտիչ է: Օրինակ՝ Յորժամ ասիցէ *Յեսու որդի* Նաւեայ (ԵԿ, II, ԻԵ, 131)*: Եվ կռոց և դրօշելոց հանգամանք՝ առ *Թարայիւ հարբ* Աբրահամու (անդ, III, Ե., 144)*: Սպանանել *զքահանայապետն* Աստուծոյ *զՎրթանէս* (ՓԲ, III, Գ, 7)*: Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց *զՊապ զորդին* Արշակայ (անդ, V, Ա, 155)*: Որ էր հայր *հաւուն* քո *Յազկերտի* (Եղշ., II 45)*: Եւ *Մարա, կին* Աբրամու, ոչ ծնանէր նմա (Ծն., ԺԶ, 1)*:

4. Ընդհանուր հասկացություն ունեցող նախադաս գոյականը կամ գոյականաբար առնված բառը կարող է ունենալ հետադաս գոյականներ, որոնք բացահայտում են այդ ընդհանուրի մեջ մտնող մասնավոր հասկացությունները, դրանք սովորական կամ բուն բացահայտիչներ են: Օրինակ՝ Եւ տայր պատերազմ շուրջ *ընդ* ամենայն *թշնամիս* իւր, *ընդ Մովաբայ* եւ *ընդ որդիսն* Ամոնայ եւ *ընդ որդիսն* Եդովմայ *եւ ընդ Բեթովրայ* եւ *ընդ թագաւորին* Սուբայ եւ *ընդ այլազգիսն* (Ա թագ., ԺԴ, 47)*: Եւ ծնաւ Նոյ երիս *որդիս, զՍէմ, զՔամ, զՅաբէթ* (Ծն., Զ, 10)*: Վասն այնորիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա հարուածք՝ *մահ* եւ *սուգ* եւ *սով* (Յայտն., ԺԸ, 8)*: Սոքա *երեքին* են որ վկայեն, Հոգին, ջուրն եւ արիւն (Ա Յով., Ե, 3)*: Արդ ի բաց թօթափեցէք եւ դուք *զայն*

---

[11] Հ.Ավետիսյանը մասնակիորեն անդրադարձել է սույն խնդրին (տե՛ս նշվ. աշխ., էջ 97–100):

[12] Հմմտ. Հ.Ավետիսյանի և մեր կողմից վկայված օրինակները: Հ.Ավետիսյանի օրինակները (տե՛ս նշվ. աշխ.) տրվում են աստղանիշով:

ամենայն. զարկութիւն, զսրտմութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ի բերանոց ձերոց (Կող., Գ, 8)*:

5. Սովորական կամ բուն բացահայտիչը բացահայտյալից ընդմիջարկվում է այլևայլ կառույցներով, կապակցություններով, սակայն նրանք կապվում են շարահյուսորեն, ինչպես նաև տրամաբանորեն: Օրինակ՝ Առ դու *զորդիդ* քո սիրելի զոր սիրեցեր՝ *զԻսահակ* (Ծն., ԻԲ, 2)*: Ունիմք այսուհետեւ *Քահանայապետ* մեծ անցեալ ընդ երկինս, *զՅիսուս* (Եբր., Դ, 14)*: *Արտաւազդայ* ոչ գտեալ, ասեն, քաջի *որդւոյն* Արտաշիսի, տեղեկիկ ապարանից (Խ., 100). այստեղ շարահյուսական կապի օգնությամբ պիտի որոշել, թե որն է բացահայտիչը. *Արտաւազդայ* սեռական հոլովով ենթակա է, նրա լրացումը՝ *որդւոյն*, համաձայնել է նրա հետ և բացահայտիչ է:

Այսպիսով, բերված օրինակներից տեսնում ենք, որ *սովորական* կամ *բուն* բացահայտիչ-բացահայտյալի շարադասությանը բնութագրական են՝ ա) բացահայտչի հետադաս կիրառությունը, բ)բացահայտչի՝ բացահայտյալին թե՛ անմիջապես մոտ, թե՛ հեռու դրվելը:

Բ) Մասնական բացահայտիչ: Արդի հայերենում տարբերակվում է *մասնական բացահայտիչ*, որը ձևավորվում է *իբրև, որպես, ինչպես* նախադրություններով՝ շարադասվելով բացահայտյալից թե՛ առաջ, թե՛ հետո[13]: Գրաբարում այդպիսի բացահայտիչ առաջինը տարբերակել է Ս.Ղազարյանը՝ նշելով, որ այն բացահայտյալի հետ կապվում է *իբրեւ, որպէս* և այլ բառերով[14]:

Գրաբարում *ինչպես* նախադրությամբ ձևավորված մասնական բացահայտչի օրինակ չկա, որովհետև, ի տարբերություն արդի հայերենի, գրաբարում այդպիսի նախադրություն չկա: Գրաբարում մասնական բացահայտիչը ձևավորվում է միայն *իբրեւ* և *որպէս* նախադրություններով:

Եթե *սովորական* կամ *բուն բացահայտիչը* տարբերակվում է շարադասությամբ և տրոհվող արտաբերությամբ, ապա *մասնական բացահայտիչը* նմանատիպ կառույցներից տարբերելու այդպիսի միջոցներ չունի: Ուրեմն պետք է կողմնորոշվել միայն կառույցի արտահայտած իմաստով. արդյոք մասնակիորեն բացահայտո՞ւմ է առարկայի այս կամ այն հատկանիշը, ով կամ ինչ լինելը: Եթե այո՛, ուրեմն մասնական բացահայտիչ է:

Մասնական բացահայտչի օրինակներ՝ կազմված *իբրև* նախադրությամբ՝

Եւ *զնա իբրև զմի* յայլոց մասանց տուեալ մեզ յառաջնորդութիւն լուսոյ [ՀՀ, 5 (1), 113]: Զանօրէն *իշխանն* խաբեցաք պատրեցաք *իբրեւ զմանուկ մի տղա* անպիտան (նտ.): Ծաղկակալ *սկսեալն իբրեւ զինու* վարեցաւ [նտ., 7 (1),

---

[13] Տե՛ս Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Ե., 1965, էջ 275 («Դիմաքսյանը սկսեց այցելել Ներսիսյան դպրոցը *ինչպես ուսուցիչ*», «Աբոյանցը՝ *ինչպես* հին *վաճառական*, տեղեկություն չի ունեցել»), Ս.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 293 («Հակոբյանը, *որպես ուսուցիչ*, իրեն արդարացնում էր», «Առաջին օրը, *իբրև նորածանոթներ*, մենք խոսեցինք քաշվելով ու կցկտուր»), Ռ.Իշխանյան, նշվ. աշխ., էջ 172–175 («*Իբրև* վաղեմի *պատմագիր*, դողացող ձեռքերով ես գրում եմ իմ պատմության վերջին էջերը», այլ շարադասությամբ էլ՝ «Ես, *իբրև* վաղեմի *պատմագիր*, գրում եմ <...>»):

[14] Հմմտ. «Ժամանակակից հայերենի նման գրաբարը նույնպես ունի *սովորական* եւ *մասնական բացահայտիչ* (ընդգծումը մերն է–Է. Մ.). վերջինս բացահայտիչի (վրիպակ է. պետք է լինի բացահայտյալի–Է. Մ.) հետ կապվում է իբրև նախադրությամբ և զ նախդիրով, ինչպես նաև *որպէս, այն է, այսինքն* և այլ բառերով» (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 427): Ընդհանրապես բացահայտչի մասին խոսելիս էլ գրում է. «Բացահայտիչը հաճախ դրվում է *այս է, այն է, որ է, յայտ է, իմա, տեսեմ, այսինքն* եւ այլ մեկնական արտահայտությունների հետ, իսկ երբեմն էլ բացահայտյալի հետ կապվում է *իբրեւ, որպէս եւ* այլ բառերով <...>» (նտ., էջ 425):

766]: Մի ոք աստանօր *զմեզ* անուսումն համարեալ բամբասիցէ *իբրեւ զանվարժ* ոմանս եւ *զտգէտս* (նտ.):

Բացահայտյալը կարող է զեղչվել. նման դեպքում զեղչված անդամի տեղը որոշվում է ենթադրությամբ: Օրինակ՝ *Իբրեւ հովիւ* հովուեսցէ զխաշինս իւր [ՀՀ, 4(1), 578]: *Իբրեւ հովիւ* մի հովուեսցէ զխաշինս իւր (նտ.):

Այս օրինակներում զեղչված է ենթակա-բացահայտյալը, որը կարելի է վերականգնել զեղչված ենթակայի վերականգնման միջոցներով, սակայն որտե՞ղ դնել. կապակցությունից առա՞ջ, թե՞ հետո՝ *Նա իբրեւ հովիւ*, թե՞ *Իբրեւ հովիւ նա*: Երկուսն էլ ընդունելի են:

Մասնական բացահայտչի օրինակներ՝ կազմված *որպէս* նախադրությամբ՝

Որպէս զանասունս ի մէջ օդոյ՝ *որք* ի նմա են եւ զատուցեալք ի նմանէ (ՀՀ, I, 703): Եւ պատուհասեալ *զնոսա որպէս զմահապարտս* [նտ., 3, (3), 257]: Ներեսջիր *ինձ որպէս տկարամտի* [նտ., 6 (2), 106]: Սիրեցին *որպէս սուսեր զլեզուս* իւրեանց (նտ.): Զայս ամենայն պարգեւէ մեծն Տրդատ *մարդկան* ազգին Կամսարականաց, *որպէս մտերմաց* եւ արեան կցորդաց ազգին Արշակունեաց [նտ., 7 (3), 261]:

Այս նախադրությամբ կազմված բացահայտչի բացահայտյալը ևս կարող է զեչվել: Հաւատարմացաւ նմա *որպէս* արդարեւ միամիտ *գործակից* (նտ.):

Բերված օրինակներից երևում է, որ մասնական բացահայտիչները գերազանցապես հետադաս գործածություն ունեն, թեև նշում ենք նրանց ազատ շարադասության մասին: Թերևս սա էլ է հաստատում այն փաստը, որ բացահայտիչը բացահայտող, մեկնաբանող անդամ է առավելապես իր նախադաս լրացյալի համար:

Գ) Մասնավորող պարագայական բացահայտիչ: Գրաբարի քերականները բացահայտչի այս տեսակը չեն նշում: Արդի հայերենի քերականագիտության մեջ ընդունված է բացահայտչի նաև այս տեսակը, պարզ է, ելնելով գրավոր խոսքի տվյալներից: Ճիշտ են անվանում բացահայտչի այս տեսակը՝ *պարագայական*, որովհետև այն բացահայտիչը, որ կարող է արտահայտվել բառով, կապակցությամբ, ինչ-որ կառույցով, *մասնավորում*, որոշակիացնում է *պարագայական*[15] իմաստը: Հատկապես մասնավորվում են տեղի, տարածական իմաստները[16]: Գրաբար խոսքը նույնպես ունի պարագայական իմաստների որոշակիացման այդպիսի հնարավորություններ ու դրսևորումներ: Ուստի քերականական այս գիտելիքը անհրաժեշտ է տարածել գրաբարի համապատասխան կապակցությունների վրա, որոնք ձևավորվում են գրաբարի քերականական օրինաչափություններով ու միջոցներով: Օրինակ՝ Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան *ի վերայ ոստոյ* միոյ, *առ եզերք գետոյն* (Խ., 48): Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն *ի քաղաքէ* նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ *ի հիւսիսոյ, ի վերայ գետոյն* Ախուրեան (նտ., 202): Զկնի այսորիկ հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ *հուպ ի քաղաքն* Երուանդայ *ի վերայ* Ախուրեան *գետոյ* (նտ., 206): Իսկ որք էին *ի ներքս, ի վանս*

---

[15] Հմմտ. *մասնավորող պարագայական բացահայտիչ* (Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջք 290, 294). *պարագայական մասնավորող բացահայտիչ* (Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջք 165, 171, 172):

[16] Ռ. Իշխանյանը մասնավորում է նաեւ ժամանակի իմաստը. «Սեպտեմբերի 11-ին, *ժամը 19.30-ին* ժուռնալիստների տանը տեղի կունենա կիթառի երեկո» (տե՛ս նշվ. աշխ., էջ 172):

սպարապետին (Ե., 130): Այսոքիկ են իշխանքն, որք չոգան ի թագաւորէն մեծէ Արշակայի Հայոց աշխարհէն *առ կայսրն* Յունաց *առ Վաղէս* (Բ., 164)[17]: Որ եղեւ *ի* Բագաւան *յաւանին, ի* Բագաւանդ *գաւառին* [ՀՀ, 3 (1), 263]: Քանզի անդէն *շուրջ զքաղաքաւն* էին, *մօտ ի քաղաքն* (Ագ., 126): Եւ ամենայն իշխանք խաղացին գնացին յԱյրարատեան *գաւառէն, ի* Վաղարշապատ *քաղաքէ* (նտ., 450): Եկին դարձեալ *յԵղիմ ի տեղին ցանկալի* (Բ Թոռ 487)[18]:

Բացահայտիչ-բացահայտյալի համաձայնությունը: Գրաբարի բոլոր քերականները բացահայտչի և բացահայտյալի համաձայնությունը բնութագրել են ըստ իրենց ընբռնած բացահայտչի բովանդակության և շարադասության, որոնք, ինչպես տեսանք, ունեն պակաս կողմեր: Ուստի, չանտեսելով այդ քերականների ճիշտ և առողջ վերլուծություններն ու բնութագրումները, բացահայտիչ-բացահայտյալի համաձայնությունը բնութագրում ենք բացահայտչի՝ ըստ մեր ներկայացրած տեսակների և նրանց շարադասությունների:

Բացահայտչի երեք տեսակներից համաձայնում են *սովորականը* կամ *բունը* և *մասնականը*:

Սովորական կամ բուն բացահայտչի և բացահայտյալի համաձայնությունը: *Սովորական* կամ *բուն բացահայտիչը* բացահայտյալին համաձայնում է հոլովով և թվով: Ըստ որում, անձնանունը, լինի բացահայտիչ թե բացահայտյալ, համապատասխանաբար ունենում է եզակի թվով բացահայտյալ կամ բացահայտիչ: Հոգնակի բառերը կամ թվական (մեկից բարձր) լրացումով բացահայտյալները ունենում են հոգնակի թվով բացահայտիչներ: Հոգնակի բացահայտյալը կարող է ունենալ բազմակի բացահայտիչ, և, հակառակը, բազմակի բացահայտյալը՝ հոգնակի բացահայտիչ. այսպիսի համաձայնություն առավել հնարավոր է մեկնական բառերի զեղչման կամ առկայության դեպքում: Համաձայնում են բացահայտիչ-բացահայտյալի նախդրավոր ձևերը՝ անկախ նրանց արտահայտած իմաստներից:

Բացահայտչի և բացահայտյալի համաձայնության օրինակներ՝ ըստ հոլովների, որտեղ դրսևորվում են համաձայնության հիշյալ առանձնահատկությունները.

1. Ուղղական հոլովով բացահայտիչ՝

Որոց դիպեալ ի հետի ընդ մէջ անցանէ *Գիսակ որդի* ստնտուին Արտաշիսի (Խ., 204): Յայնժամ գայ առ նա ազգականն իւր եւ հարազատ *Կամսար, որդի* Պերոզամատայ (նտ., 266): Եկն *Վարդ* ողջ զերծեալ ի կապանացն զօրութեամբն աստուծոյ, *եղբայր* զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի (Բագ., 324): *Ես տէր* խօսեցայ (նտ.): *Ես հովիւս* յանցեայ (նտ.): *Նոքա՝ հերձուածողքն* առնեն (նտ.): Եւ *նոքա՝ կողմանքն* երկոքին ընդ միմեանս խուսնէին (նտ.):

Հետևյալ օրինակներում կան կամ բազմակի բացահայտյալ (*Պապն* եւ *Աթանագինէս*), կամ բազմակի բացահայտիչ (*Արշակ* եւ *Խոսրով, մահ* եւ *սուգ* եւ *սով, հոգին, ջուրն* եւ *արիւն*).

Եւ *Պապն* եւ *Աթանագինէս* երկոքեան *եղբարքն* այսպէս սատակեցան (Բ., 76): Երկոքեան *թագաւորքն* Հայոց՝ *Արշակ* եւ *Խոսրով* ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ (նտ., 400): Վասն այ-

---

[17] Առ Վաղես նախդրավոր ձևը կարելի է նաև բուն բացահայտիչ համարել:

[18] Հմմտ. Մ.Մինասեան, Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն, Ժնև, 1996, էջ 359:

նոոին ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա *հարուածք՝ մահ* եւ *սուգ* եւ *սով* (Յայտն., ԺԸ, 8)*: Սորա *երեքին* են որ վկայեն, *Հոգին, ջուրն* եւ *արիւն* (Ա Յով., Ե, 8)*:

Բացահայտիչը կարող է արտահայտվել *դերբայական դարձվածով*

Այլք *մեք ասղրեալքս զօրութեամբ Աստուծոյ*, եւ *հաստատեալքս հաւատովքն ի յոյսն Քրիստոսի*, որ եկն եւ էառ ի սուրբ կուսէն զմարմին մերոյ բնութեանս (Ե., 174):

2. Սեռական հոլովով բացահայտիչ՝

Թագաւորեցուցանէ ի քսան եւ հինգերորդի ամի *Դարեհի* Պարսից *արքայի* (Խ., 206): Զի այժմիկ *ձեր ծառայից զմեր տերանց* ձերոց զբարձ կալեալ է (Բ., 258): Զի՞արդ երեւէր ընտրութիւն գործոցն եթէ ոչ ունէր մարդն իշխանութիւն *երկոցունց*, եւ *անսալոյ* եւ *չանսալոյ* (ՀՀ, I, 270): Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ որդի մեծին *Ներսիսի, որդւոյ* Աթանագենի, *որդւոյ* Յուսկան, *որդւոյ* Վրթանիսի, *որդւոյն* սրբոյն Գրիգորի [նտ., 7 (3), 241]:

3. Տրական հոլովով բացահայտիչ՝

Զի եւ *ձեզ. անգիտելոց* եւ *յանցուցելոց*, լիցի թուլութիւն (Ագ., 334): *Երկու կողմանցդ* լինիցին մեղք, *նոցա* եւ *ձեզ* (Բագ., 324): Հասարակաց *ամենեցուն* օրէնս դնէ, *մեծատանց* եւ *աղքատանց* (նտ.):

Տրական հոլովի իմաստով բացահայտիչը կարող է արտահայտվել նախդրավոր (*ի, զ, առ*) հայցականի ձևերով: Նախդրավոր բացահայտիչները բացահայտյալներին համաձայնում են հոլովով և թվով:

Օրինակ՝ Մեք, ասեն, քանզի չեմք բաւական մերձենալ *յամենեցունց պատճառն, յէն, ի զոյն ի մշտնջենաւորն* եւ *յանմատոյցն* (ՀՀ, I, 315). այս օրինակում համաձայնությունը յուրահատուկ է. բացահայտիչները նույնիմաստ բառեր են (*Էն, զոյը, մշտնջենավորը, անմատչելին*, այսինքն՝ *Աստված*), որի պատճառով բացահայտյալը եզակի թվով է, թեև ունի հոգնակի լրացում (*յամենեցունց պատճառն*): Ասէ Աբրահամ *ցծառայն* իւր *ցերէց* տան իւրոյ, *ցիշխան* ամենայն ընչից նորա (Գ. Աւետ., 334): *Առ Լաբան որդի* Բաթուելի ասորւոյ՝ *եղբայր* Ռեբեկայ (նտ.). *առ* նախդիրը զեղչված է. վերաբերում է նաև *որդի* և *եղբայր* բառերին: *Առ* ամենայն *ազգս* տէրութեան իմոյ՝ *արեաց* եւ *անարեաց*, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ (Ե., 18). այստեղ բացահայտյալը նախդրավոր ձև է՝ տրականի իմաստով, իսկ բացահայտիչները՝ անանախդիր տրական հոլովաձևեր:

4. Հայցական հոլովով բացահայտիչ՝

Եւ *զՆերսեհ զորդի* որդւոց իւրոց ստնտուին Գիսակայ, ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահատակութեան հօրն Դիմաքսեան (Խ., 206): Նա եւ այլ *կանայս* առեալ, *զմերձաւորս* Արտաշրի բնութեամբ ունի զկողմանս զայնոսիկ (նտ., 286): Բնակեցուցանէ եւ *երիս աւանսն, զԽրամ*, եւ *զՋուղայ* եւ *զԽորշակունիս* իսկ ի միւս կողմանէ գետոյն [ՀՀ, 7 (3), 348]: Կոչեաց *զԵսաւ զորդի* իւր զերէց (Գ. Աւետ., 334): Եւ *զԿղէոպատրա զդուստր* իւր (Բագ., 324): *Զմեզ զառաքեալս* յետնորդս արար (Չալ., 255):

Նախդրավոր հայցականով բացահայտիչ, որ արտահայտվում է նախադասությամբ՝ Ամենայն օրէնք *ի մի բան* կատարին, *ի սիրեսցեսն զընկեր քո իբրեւ զանձն քո* (Բագ., 325). Ա. Բագրատունին մեկնաբանում է. «ուր ամբողջ բանդ բացայայտիչ կայ *միոյ բանին*»[19]:

---

[19] Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 325:

Եթե բացահայտիչը և բացահայտյալը մեկնական բառով են կապակցվում (մեկնականը կարող է և զեղչվել), կարող են չհամաձայնել:

Օրինակ՝ Մի՛ սիրեր *զծուլութիւն* եւ *զքուն,–զմայրն* ամենայն թշուառութեանց (Չալ., 255). բազմակի բացահայտյալը ունի եզակի բացահայտիչ. մեկնականը զեղչված է, իսկ *մայրն* բացահայտիչը փոխաբերական և ընդհանրացնող իմաստով է:

5. Բացառական հոլովով բացահայտիչ՝

Յերկուց բնութեանց են՝ *ի մարմնաւորաց* եւ *յանմարմնոց* (ՀՀ, I, 51): Այլ նա աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ *ի չորից երիվարաց* զաշխարհս տեսանեմք, *ի ջերմութենէ ի ցրտութենէ ի ցամաքութենէ* եւ *ի խոնաւութենէ* (Եզն., 14): *Յերկուց հակառակացն* խառնեալ, *ի բարւոյն* եւ *ի չարէ* (Բագ., 324): Զի՞արդ *յինէն* ընպել խնդրես՝ *-ի կնոջէ* սամարացւոյ (Չալ., 255):

Տարբեր օրինակներում գործածված բազմակի բացահայտիչների համար բնորոշ և ընդհանրական է թվական լրացումով բացահայտյալ ունենալը՝ *յերկուց բնութեանց. ի չորից երիվարաց. յերկուց հակառակաց*:

6. Գործիական հոլովով բացահայտիչ՝

Մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով եւ մեծաւ փառօք, բազում *գանձու ոսկւով* եւ *արծաթով* (Բ., 194). *գանձ* հավաքական իմաստով է, որի համար էլ եզակի թվով բազմակի բացահայտիչ ունի: *Մեք* քարոզեցաւ, *ինեն* եւ *Միղուանոսիւ* եւ *Տիմոթէիւ* (Բագ., 324): Ծրջել *զեղբարքն* իւրովք, *զորդւովքն* Իսրայէլի (Գ. Աւետ., 329-330):

Բացահայտիչը և բացահայտյալը երբեմն չեն համաձայնում.

Խառնք (պէտք) են՝ որ *յերկաքանչիւրոցն, բանիւ* եւ *գործով* (Գ. Աւետ., 332). այստեղ բացահայտյալը՝ *յերկաքանչիւրոցն*, դրված է բացառական հոլովով, ուրեմն հոլովական անհամաձայնություն կա: Եթե հոլովով համաձայնեին, կապակցությունը պիտի լիներ՝ ...որ (լինին) *երկաքանչիւրովք, բանիւ* եւ *գործով* կամ՝ *յերկաքանչիւրոց, ի բանէ* եւ *ի գործոյ*.

Սովորական կամ բուն բացահայտչի և նրա բացահայտյալի հոլովական անհամաձայնության մի դրսևորում կա, որը գրաբարի ներքին օրինաչափության արդյունք է. բացահայտյալը սեռական հոլովով բուն ենթակա է անցյալ դերբայի մոտ, իսկ բացահայտիչը՝ ուղղական հոլովով: Օրինակ՝ Այսօր ժողովեալ *սրբոցն* ի միասին՝ երանելի *առաքեալքն* եւ սուրբ *կուսանք* (Գ. Աւետ., 332). *սրբոցն* հոգնակի սեռականը *ժողովեալ* դերբայ-ստորոգյալի բուն ենթական է: Նույնն է՝ Այսց երկուց բարգաւաճ *շնորհաց* նորոգչաց առ միմեանս եկեալ՝ *կարելն* ընդ *կամելն* (անդ):

Այդպիսով՝ գրաբարում սովորական կամ բուն բացահայտիչը՝ ա) հետադաս է, բ) համաձայնում է հոլովով և թվով. հազվադեպ լինում է անհամաձայնություն:

Սովորական կամ *բուն բացահայտիչը* արտահայտվում է *բառերով, նախդրավոր ձևերով*, նույնիսկ *դարձվածով* և *այլ կապակցությամբ*:

Մասնական բացահայտչի և բացահայտյալի համաձայնությունը:

Մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է բացահայտյալին: Համաձայնությունը կատարվում է նախադրության խնդրի միջոցով. քանի որ նախադրությունները անփոփոխ են, այսինքն՝ չեն հոլովվում, ուստի համաձայնում են նախադրության խնդիրը (կապվող բառը) և բացահայտյալը:

Այսպիսի համաձայնության մեջ մի երևույթ արժանի է ուշադրության. թեև *իբրեւ* և *որպէս* նախադրությունները սովորաբար ընդունում են հայցական

հոլովով խնդիր, սակայն այս պարագայում բացահայտյալի պահանջով նախադրության խնդիրը համապատասխան հոլով և թիվ է ստանում: Սա մի երեվույթ է, որ հատուկ է նաև մյուս անդամների (ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ) համաձայնությանը: Նախադրության խնդիրը դրվում է թե՛ ուղղական և թե՛ թեք հոլովներով, եզակի կամ հոգնակի թվերով:

Ուրեմն՝ մասնական բացահայտչի համաձայնությունը առանձնահատուկ է նրանով, որ համաձայնությունը կատարվում է խնդիր-բաղադրիչի միջոցով, սակայն այն վերագրվում է ամբողջ բացահայտյալին:

Օրինակներ՝ *1. Ուղղական հոլովով*

Իբրեւ ի բարերարէ անտի Աստուծոյ *սերեալք* բազմացան [ՀՀ, 4 (1), 578]. բացահայտյալը զեղչված է. պարզ է՝ *նոքա:* Առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ եւ փառաւորեալք, *իբրեւ հեշտացուցիչք* եւ *կամակատարք* [նտ., 7 (1), 766]. այստեղ նույնպես զեղչված է բացահայտյալը, որի հոգնակի լինելը երևում է ստորոգելիից՝ *պաշտելիք:*

2. Տրական հոլովով՝

Ներեսջի՛ր *ինձ որպէս տկարամտի* [ՀՀ, 6 (2), 106]: Զայս ամենայն պարգեւէ մեծն Տրդատ *մարդկան* ազգին Կամսարականաց, *որպէս մտերմաց եւ արեան կցորդաց* ազգին Արշակունեաց [նտ., 7 (3), 261]: Տայ *նմա* ժառանգութիւն *որպէս ազգականի* իւրում եւ մտերիմ *հարազատի* (նտ.): Յանձն առնէ զաշխարհիս *Արշաւիր Կամսարականի, որպէս զլխաւորի եւ յոյժ պատուականի* յետ արքայի (նտ.):

Նախդրիվ տրական՝ Գրէին ի նա՝ *իբրեւ ի հայր* (Բ Թոռ 400)[20]:

3. Հայցական հոլով՝

Եւ պատուհասեալ *զնոսա իբրեւ զմահապարտս* [ՀՀ, 3 (3), 257]: Եւ *զնա իբրեւ զմի* յայլոց մասանց տուեալ է մեզ յառաջնորդութիւն լուսոյ [նտ., 5 (1), 113]: Զանօրէն *իշխանն* խաբեցաք պատրեցաք *իբրեւ* զմանուկ մի *տղա* անպիտան (նտ.): Մի ոք աստանօր *զմեզ* անուսումն համարեալ բամբասիցէ *իբրեւ անվարժս* ոմանս եւ *զտգէտս* [նտ., 7 (1), 766]:

Բացահայտիչը եւ բացահայտյալը երբեմն չեն համաձայնում՝

Որպէս զանասունս ի մէջ օդոյ՝ *որք* ի նմա են եւ *զատուցեալք* ի նմանէ (ՀՀ, I, 703). հոլովական անհամաձայնություն կա, ինչը բացատրվում է *որպէս* նախադրության խնդրառությամբ, որն ստանում է հայցականով խնդիր՝ անկախ բացահայտյալի հոլովական արտահայտությունից: Սիրեցին *որպէս սուսեր զլեզուս* իւրեանց [նտ., 6 (2), 106]. այստեղ էլ թվային անհամաձայնություն կա:

4. Բացառական հոլովով՝

Եւ դու կալցես զաշխարհս, եւ բազմաց *յինէն* հանդիպեսցիս բարութեանց *որպէս ի* մտերիմ *հարազատէ* [ՀՀ, 7 (3), 261]:

Այսպիսով՝

ա) գրաբարում *բացահայտիչների (սովորական* կամ *բուն* և *մասնական) համաձայնությունը բացահայտյալին* լինում է հոլովով, թվով, հազվադեպ՝ դեմքով, եթե բացահայտյալը անձնական դերանուն է, իսկ բացահայտիչը՝ համապատասխան դիմորոշ հողով (օրինակ՝ *Ես հովիւս* յանցեայ).

բ) թվային համաձայնության դեպքում բացահայտյալները կարող են լինել՝ եզակի կամ հոգնակի թվերով (նախդրավոր), անեզական, հավաքական

[20] Օրինակը տե՛ս Մ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 359:

իմաստով, թվական լրացումով, բազմակի, իսկ *բացահայտիչները* համապատասխանաբար՝ եզակի, հոգնակի կամ անեզական, հավաքական իմաստով, բազմակի և այլ կապակցություններ.

գ) հոլովական և թվային առանձնահատկությունները հազվադեպ են լինում:

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագ.–Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983:
Բ.–Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Ե., 1987:
Բագ.–Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
Գ.Աետ.–Գ. Աետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:
Ե.–Եղ իշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1989:
Եզն.–Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1994:
Խ.–Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981:
Ծն.–Գիրք ծննդոց, Ե., 1985:
ՀՀ–Հայկական համաբարբառ:
Չալ –Վ. Չալրխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885:

СОЧЕТАНИЕ ПРИЛОЖЕНИЯ С ЕГО ОПРЕДЕЛЯЕМЫМ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ (ГРАБАРЕ)

Э.С.МКРТЧЯН

Р е з ю м е

Из второстепенных членов. относящихся к именному словосочетанию предложения, особо следует рассмотреть словосочетание, главным членом которого является приложение.

Синтаксические и структурные особенности приложения и его определяемого анализируются с характеристикой видов приложения. Последнее имеет три вида: *обычное* или *истинное* приложение, *частное* и *частно-обстоятельственное*.

В грамматике грабара идентифицировались определение, выраженное существительным, и приложение.

Попытка разграничения этих двух понятий была сделана Г.Аветисяном. В данной статье их различие конкретизируется и углубляется на основе оригинальных текстов.